



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

BISHOP KHAJAG BARSAMIAN, PRIMATE

Թի 858  
Ապրիլ 20, 1992

Արժանաշնորհ  
Տ. Վրթանէս Ա. Քհնյ. Գալայճեան  
Հովի Ա. Աստուածածին Եկեղեցոյ  
Նախագահ Ծխական Խորհուրդի  
Ուսշինկթըն Տի. Սի.

Սիրելի Տէր Վրթանէս,

Սուսցած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 26, 1992 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 9, 1992-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդին չորս անդամներ: Կու տաք բուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Ստեփան Էվէրէկեան  
Վարդգէս Քէշիշեան  
Ստեփան Օհանեան  
Դաւիթ Սահր

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը: Մեր մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան  
Առաջնորդ